# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

| ԹԵՐԹ | ԱՆՎԱՆՈՒՄ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| *ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ* | | |
| 1 | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ,ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ՃՇ - 1 |
| 2 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ | ՃՇ - 2 |
| 3 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱՄԱՍ | ՃՇ - 3 |
| 4 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՏԵՂԱՄԱՍ | ՃՇ - 4 |
| 5 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԵՐԿՐՈՐԴ ՆՐԲԱՆՑՔ | ՃՇ - 5 |
| 6 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 8-ՐԴ ՓՈՂՈՑ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱՄԱՍ | ՃՇ - 6 |
| 7 | ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 8-ՐԴ ՓՈՂՈՑ ԵՐԿՐՈԴ ՏԵՂԱՄԱՍ | ՃՇ - 7 |
| 8 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | ՃՇ - 8 |

## 1. Ներածություն

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի գրունտային ճանապարհների վերանորոգման աշխատանքային նախագիծը կազմվում է Դիլիջանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա : Նախագիծը կազմված է Դիլիջանի քաղաքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի : Համաձայն վերը նշված առաջադրանքների վերանորոգման փողոցի տարածքը՝ 1903.0 գմ երկարությամբ:

Ճանապարհի հատակագիծը,երկայնական և լայնական կտրվածքները փոփոխության չեն ենթարկվում:

## 2. Շրջակա միջավայրի պահպանում

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամ- քով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը շինարարական աղբից, բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

Շին. կազմակերպության աշխատողները և ղեկավարները պետք է միշտ հիշեն շրջակա միջավայրի պահպանման մասին : Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաս-տաթղթերը. ՇՆ և Կ III - 4.80 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում» ՇՆ և Կ III - 1.75 «Շինարարական արտադրության կազմակերպում»:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի տարբեր մասերում ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման աշխատանքային նախագիծը մշակված է համաձայն ՇՆուԿ 3.01.01 - 85 « Շինարարության արտադրության կազմակերպում » և ՇՆ - 440 - 7 « Շինարարության տևողության նորմեր » ձեռնարներին համապատասխան :

Ճանապարհի նորոգման աշխատանքները կատարվելու են ճանապարհի վրա, որը ըստ ՀՀՇՆ 2 - 02 - 94 - ի գտնվում է սեյսմիկ 2 - րդ գոտում :

- Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական , տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ
- Հակահրդեհային անվտանգությունը շին հրապարակում և աշխատանքի տեղամասերում պահպանել համապատասխան հակահրդեհային անվտանգության կանոններ ձեռնարկի պահանջներով
- Հողային աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային գծագրերի և ՇՆուԿ 3 - 02 - 01 - 87 - ի ձեռնարկի պահանջներով
- Կրող և պատող կոնստրուկցիաների աշխատանքները կատարել համաձայն ՇՆուԿ 3 - 03 - 01 - 87 - ի և ՇՆուԿ III - 3 - 80 ձեռնարկների և աշխատանքնային գծագրերի պահանջներով

Ճանապարհի նորոգման շինարարության տևողությունը հաշվարկված է ՇՆ - 440 - 79 - ի ընդհանուր դրույթների կետ 19 - ի համաձայն : Աշխատանքների ժամկետները և հերթականությունը տրված են կից ներկայացվող ժամանակացույցում :

- Աշխատանքները կատարելու ժամանակ ձեռնարկել միջոցառումներ տարածքի կանաչապատ գոտիների պահպանման և շրջապատի օդի փոշոտացման բացառման համար :

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | |
| | | | | | | | |
| ՓՈՓ | ԹԵՐԹ | N ՓԱՍՏԱԹՂԹԻ | ՍՏՈՐԱԳ | ԱՄՍ | | | |
| ՏՆՕՐԵՆ | | | | | | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ԳԾԵՑ | | | | | | ԱՆ | ՃՇ - 1 | 8 |
| ՍՏՈՒԳԵՑ | | | | | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

A3